յից։ Տարբերությունը միայն այն էր, որ հայերը ամուսնանալու դեպքում պետք է հարկ վճարեին և՛ այն վայրի ֆեոդալին, որտեղ արձանագրված էին, և՛ հայ եկեղեցուն։ Այդ մասին պարզ կերպով նշված է Էրզրումի կանոնամեում։ Այնտեղ ասված է, որ Էրզրումի վանքերի հոգևորականները «իրենց ձեռքերում սրբազան որոշումներ ունենալու պատճառով» իրավունք ունեն իրենց ենթակա անհավատներից գանձելու «ամուսնության հարկեր» („nikâh akçesi") ըստ (նրանց մոտ) տիրող սովորության և ըստ նրանց հայեցողության»[1]։

Տեղի ֆեոդալին վճարվող «ռեսմ-ի 'արուսիե»ի չափը, ըստ կանոն-նամեների, կույս աղջկա ամուսնանալու դեպքում 60 ակչե էր, իսկ այրի կնոջ՝ 30։ Եթե աղջիկը, կամ այրի կինը ամուսնանում էր հարևան թիմարում արձանագրված մարդու հետ, այդ դեպքում նրա ծնողները պարտավոր էին հարկի կեսը մուծել տեղի իրենց ֆեոդալին, իսկ կեսը մյուս ֆեոդալին[2]։

«Սելամլըկ» („Selamlık")՝ հարկ ողջունելու համար։ Այսպես էր կոչվում ռայաթի վճարած այն հարկը, որը տրվելու էր նոր նշանակված ֆեոդալին «նվերի» ձևով։ Հարկը մեծ մասամբ բնատուրք էր։

Էրզրումի կանոն-նամեում մեղադրվում է մի ոմն սանջակ բեկ՝ Սոմբատ անունով (հավանաբար իսլամացած հայ), սելամլըկի անվան տակ ժողովրդին կողոպտելու համար։ 1540 թ. նա Էրզրումի վիլայեթի գյուղերի ամեն մի տնից վերցրել է մեկական գլուխ պանիր և մեկական գառ։ Իսկ Մուշի պետական պաշտոնակատարները, ասված է նույն տեղում, յուրաքանչյուր յոթ տնից վերցրել են մեկ գառ և մի գլուխ պանիր[3]։

«Բայրամջեկ» (Bayramcek) և կամ «բայրամլըկ» (bayramlık)։ Դարձյալ պարտադիր հարկ, որը գանձվում էր ռայաթից ֆեոդալի կամ տեղում նշանակված կառավարչի օգտին մուսուլմանական տոների օրերին[4]։

«Բայրամջեկի» նման հարկեր են նաև «ռեսմ-ի շահնեգի»ի („Resm-i şahnegi") «նոխրջեկը» և կամ «ռեսմ-ի նիյաբեթ»ը („resm-i niyâbet")։ Ըստ Էրզրումի կանոն-նամեի, որպես «ռեսմ-ի նիյաբեթ», գանձվել է վից ակչե[5]։

Էրզանի լիվալի կանոն-նամեում ասված է, որ հայկական գյուղ հանդիսացող Բայուրից վերցված է 400 կարաջա ակչե «նոխրջեկ», երկու հարյուր կարաջա ակչե «դիվանջեկ»[6] և երկու հարյուր կարաջա ակչե «բայրամջեկ»[7]։

«Ռեսմ-ի ըրգադիե» („resm-i ırgadiye")— այսպես էր կոչվում ռայաթներից տեղի ֆեոդալների օգտին տարեկան որոշ օրեր պարտադիր աշխատանքի փոխարեն գանձված հարկը[8]։ Անվանվում էր նաև «կուլլուկ» („kulluk)՝ ծառայություն իմաստով։ Սա ինքնըստինքյան ցույց է տալիս գյուղացու կախյալ վիճակը ֆեոդալից։

---

[1] Erzrum kanunu, s. 68.

[2] Erzrum kanunu s. 69, Gürcistan kanunnâmesi s. 199.

[3] Erzrum kanunu, s. 67.

[4] Defter-i yasaha liva-i Ergani s. 149, Arabgir livasi kanunu, 171, kanuni liva-i Kayseriye s. 56.

[5] Erzrum kanunu. s. 68.

[6] Defter-i yasaha liva-i Ergani s. 149·

[7] Տե՛ս Defter-i yasaha liva-i Ergani, s. 151։ Երեք կարաջա ակչեն հավասար է եղել մեկ օսմանյան ակչեի (նույն տեղ, էջ 131)։

[8] Նույն տեղում։